

Մանուկ Ա. Հարությունյան
Փիլիսոփ. գիտ. թեկնածու

ԱՐԳԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է*

Վերլուծելով վերջին տասնամյակներին Հայաստանում տեղի ունեցած արմատական հեղափոխումները՝ հույժ կարևոր է պարզել, թե այդ ամենի արդյունքում ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել արդարության վերաբերյալ մարդկանց հիմնարար պատկերացումներում և որքանով են դրանք համապատասխանում գնահատման՝ բոլորի համար հասկանալի չափանիշներին:

Քսանամյա տեկտոնիկ փոփոխություններից հետո անհնար է միարժեք և միաչափ ընդգրկումով տալ այս հարցերի պատասխանը, քանզի հայ հասարակության կերպավորման գործընթացը շարունակվում է ու դեռևս հեռու է իր ավարտին հասնելուց: Սա նշանակում է, որ արդարության արժեքները նույնպես առայժմ չեն կայացել որպես համակարգ, թեև դրանց մի մասն արդեն ամրագրվել է սոցիալական մշակույթի և զանգվածային հոգեբանության մեջ:

Մտահոգիչ է նաև այն իրողությունը, որ վերջին տարիներին Հայաստանի կառավարող վերնախավի, ակադեմիական շրջանակների և ո՛չ մի ներկայացուցիչ, ով հանդես է եկել սոցիալական և ազգային արդարության թեմայով, այդպես էլ չի ճշգրտել, թե ի՞նչ է դրանց տակ հասկանում, ինչպիսի՞ն կցանկանար տեսնել մեր երկիրը, ասենք՝ 10-20 տարի անց, **ի՞նչն է համարում արդար և ինչը՝ անարդար:**

Հայ փիլիսոփաներն ու սոցիոլոգները նույնպես խոսում են արդարության արժեքների անորոշության և առանձնապես՝ իրավական նորմերի անկատարության մասին, որոնց շարքային քաղաքացին պարզապես անկարող է հետևել իր առօրյա կյանքում: Քանզի իրավական պրակտիկայում ստեղծվել է այնպիսի տարօրինակ իրավիճակ, փոխհարաբերությունների այնպիսի ցանց, որ կարծես հենց **անարդարությունն է նրա «օրենքը»:**

Առաջնորդվելով ամերիկացի քաղաքական փիլիսոփա Ջոն Ռոուլսի կոնցեպցիայով¹, առանձնացնում ենք արդարության երկու սկզբունք: Նախ՝ **ազատության սկզբունքը**, բոլոր մարդիկ օժտված են հավասար իրավունքներով՝ հավասարապես օգտվելու հիմնական ազատությունների առավելագույնս մեծ

*Նկատի ունենալով արդարության գիտաբեմայի հրատարակությունը՝ ժամանակավորապես ընդհատել ենք հայագիտության մեթոդաբանական հիմնախնդիրների քննարկումը «Յիմնաքարեր» խորագրի ներքո: Այն կշարունակվի մեր հանդեսի հաջորդ համարում: Խմբ.: Յողվածն ընդունվել է տպագրության 15.12.2011:

1 Տե՛ս **Алексеева Т.А.** Современные политические теории, М., 2001, с. 136-138.

համակցությունից: Արդարությունն այստեղ հասկացվում է նախևառաջ՝ որպես քաղաքական իրավահավասարություն, որպես դատարանների ազնվություն, կառավարող դասակարգի պատասխանատվություն: Նաև՝ գործուն սոցիալական երաշխիքների ամբողջություն, որը պահանջում է համակարգային կոռուպցիայի և համատարած աղբատության վճռական հաղթահարում: Երկրորդ՝ **տարբերակման սկզբունք**, սոցիալական և տնտեսական անհավասարությունը պետք է կարգավորվի այնպես, որ՝

ա) նման կարգաբերմամբ առավել անապահովները կարողանան առավելագույն օգուտ ստանալ,

բ) ինստիտուտները և հասարակական դիրքերը բոլորի համար բաց լինեն, այսինքն՝ ազնվորեն պահպանվի հավասար հնարավորությունների սկզբունքը:

Հայ հասարակության մեջ հեռանկարում այսպիսին պետք է լինեն արդարության մասին պատկերացումները, կողմնորոշիչ սկզբունքները, այսինքն՝ **այն ակնհայտ և բոլորին հասկանալի արժեքները, որոնց վերաբերյալ ընդհանուր հայացքները մեզ դարձնում են միասնական ազգ: Դա այն է, ինչից երբեք չպետք է հրաժարվենք և ոչ մի հանգամանքում:**

Ակնհայտ է, որ անցած 20 տարիների ընթացքում մեզանում լրջորեն փոխվել են արդարության մասին հիմնարար պատկերացումները: Այսօր Հայաստանում այլևս անհնար է արդարության նկատմամբ նախկին **համայնավարական**, հավասարարական մոտեցումը: Միաժամանակ՝ անընդունելի է նաև **լիբերալ** մոտեցումը, որը, կապված լինելով իրավունքների ձևական հավասարության հետ, գործնականում չի շոշափում դրանց իրականացման կոնկրետ պայմանները: Ներկայումս, երբ տարբեր դասակարգերի, խմբերի և անհատների սոցիալական հնարավորությունների միջև գոյություն ունեն վիթխարի խզումներ, երբ պետական բյուրոկրատիան սերտաճել է տնտեսական կապիտալին և նրա բազմաբովանդակ կոռուպցիոնական շնորհիվ մոռացության են տրվել պետության և ժողովրդի արմատական շահերը, ուտոպիա կամ, պարզապես, արտուրդ կլինեք ապավինել ռացիոնալ ընտրությանն ու համապատասխանաբար՝ շուկայի համընդգրկուն արդյունավետությանը: Ինչպես ցույց է տալիս հետխորհրդային մյուս երկրների փորձը, լիբերալ ուղին տանում է հասարակության սոցիալական տրոհմանն ու պառակտմանը, ինչը շրջափակում է ազգային պետականության ժողովրդավարական արդիականացումը, հարուցում է մշտական սոցիալական լարվածություն, և որպես արդյունք՝ քաղաքական ցնցումներ ու հուզումներ: Դա հանգեցնում է պետականության, ազգային իդեալների ու արժեքների հեղինակահանում, ինչը արմատապես հակասում է հայ հասարակության բարոյական առողջացման գերագույն նպատակին:

Մեզ համար անընդունելի է նաև, այսպես կոչված, **համընդհանրական պատերնալիզմը**՝ ամեն ինչում պետությանն ապավինելու, սեփական կյանքը կառուցակարգելու գործում ակտիվ, նախաձեռնողական վարքից խուսափելու՝ պասիվ հարմարվողականության հոգեբանությունը: Որո՞նք են դրա հետևանքները: **Նախ**՝ այն թուլացնում-նվազեցնում է այն խմբերի սոցիալական պատասխանատվությունն ու ակտիվությունը, որոնք օժտված են ինքնաիրացման ռեսուրսներով կամ ձգտում են դրան: **Երկրորդ**՝ պատերնալիզմը թուլացնում է Հայաստանի արդիականացման սոցիալական ներուժը, նրա դինամիկան՝ սոցիալական խնամառության տրամադրությունների աճի շնորհիվ: Դա քայքայում է հասարակու-

ՀԻՄՆԱԲԱՆՈՒՄ

Գ. (Թ) Գաթի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

թյան բարոյաիրավական հյուսվածքները, հիմնախախտում սոցիալական խթանների ողջ համակարգը: **Երրորդ**² պատերնալիզմի քաղաքական-գաղափարախոսական ուղեգիծը հակասում է «Նոր Հայաստանի» կառուցման ռազմավարական նպատակին, քանզի նրա հիմնարար ուղեցիղերը էականորեն տարբերվում են առաջադիմության ճանապարհը բացող համամարդկային գաղափարներից:

Ներկայումս փաստորեն ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ հասարակության սոցիալական ու բարոյահոգեբանական առողջացումը չի կարող տեղի ունենալ ո՛չ արդարության մասին խորհրդային պատկերացումների, ո՛չ էլ ներկա բարձիթողի «շուկայական իրավունքի» կիրարկումով: Ցավոք, մեզանում շուկայի մեծամոլիկ ջատագովներին չսթափեցրին Արևմուտքի հեղինակավոր գործիչներից, Ֆրանսիայի նախկին վարչապետ Լ.ժոսպենի խոսքերը. «Այո՛ շուկայական տնտեսությանը, ո՛չ շուկայական հասարակությանը»²:

Մեզանում ձևավորվեց օլիգարխիական, «հայրենակալվածքային» կապիտալիզմ, որը շատ շատերի մոտ զարգացնում ու կատարելագործում է սեփական հայրենակիցներին անարդար ու անբարո հնարքներով շրջանցելու, ստորացնելու, մեքենայությունների դիմելու վայրենի բնագղներն ու ունակությունները՝ խարդավանելու «արվեստը»: Այս ամենը ստեղծում է համընդհանուր անարդարության մթնոլորտ, բանասարկությունների միջոցով սեփական նշանակալիությունը հաստատելու տրամադրություններ: Նման պայմաններում մարդկանց նկատմամբ հսկողությունը դիտվում է որպես անհատական ցանկությունների ապահովման միջոց, ուստի մեր հայրենակիցները համարվում են սոսկ սեփական շահերի իրացման պոտենցիալ գործիքներ կամ սպառնալիքներ:

Ակներև է, որ անհրաժեշտ է նոր մոտեցում **սոցիալական արդարության** նկատմամբ, որը բոլորին, այդ թվում և ամենափոքր սոցիալական խմբերին հնարավորություն կընձեռի լսելի ու ներառված լինել պետության և հասարակության կառավարման գործընթացների մեջ, վստահ լինել, որ մեր երկրում չկան իրավագուրկ և անպաշտպան մարդիկ, որ ազատությունն ու արդարությունը մատչելի են յուրաքանչյուրին:

Հայ հասարակության **ժողովրդավարական արդիականացումը** արդարությունը կդարձնի բոլոր նախագծերի ու կողմնորոշիչների կարևորագույն չափանիշ: Համապատասխանությունն այդ չափանիշին կդառնա ինստիտուցիոնալ մեխանիզմների ընտրության գլխավոր միջոցը, որը ներառված կլինի արդիականացման նախագծի մեջ:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ հայ հասարակությունն արդեն պատրաստ է արդարության, «արդար զարգացման» նոր ըմբռնմանը. **աղքատներին՝ պաշտպանություն, ակտիվ, նախաձեռնող քաղաքացիներին՝ աջակցություն, հարուստներին՝ օրենք**: Սոցիալական արդարության նոր ըմբռնումը կարող է և պետք է հենվի ազգային և սոցիալական համերաշխության, անապահով խավերին երաշխիքներ տրամադրելու, ակտիվ և ձեռներեց մասին պետական աջակցություն ցույց տալու և հարուստների պատասխանատվության սկզբունքների վրա:

Առանց նման համախմբման Հայաստանը չունի առաջանցիկ զարգացման և

² Գլուսը ըստ՝ **Абалкин Л.И.**, Смена тысячелетий и социальные альтернативы, «Вопросы экономики», 2000, N 12, с. 33.

պատմական մարտահրավերներին արժանի պատասխան տալու հնարավորություն: Առանց դրա անհնար է նաև արդյունավետ պետական ինստիտուտների համակարգի ստեղծումը, քանզի **ազգահավաքը կամ ազգային համախմբումը կապված են ազգային ընդհանուր համաձայնության ամրապնդման և ընդլայնման հետ, որի գործուն մեխանիզմը սոցիալական համերաշխությունն է:**

Ազգային և սոցիալական համերաշխությունը կամ համընդհանուր համերաշխությունը ենթադրում է, որ ազգովին անընդունելի պետք է ճանաչվի այն աղետաբեր իրողությունը, երբ մեր համաքաղաքացիների մեծամասնությունը ծանր կարիքի, չքավորության, իսկ մեծահարուստ փոքրամասնությունը շքեղության մեջ է «լողում»: Այստեղից էլ հետևում է, որ անապահով խավերին պետք է տրամադրվեն արժանապատիվ գոյության իրական սոցիալական երաշխիքներ: Դրանք պետք է տրվեն նախևառաջ նրանց, ովքեր իսկապես, օբյեկտիվ հանգամանքների բերումով, ամեն ջանք գործադրելու դեպքում էլ, միևնույն է, անկարող են ինքնուրույնաբար լուծել իրենց կենսական պրոբլեմները: Խոսքն այն բազմաչարչար խավի մասին է, որն ակնհայտորեն անկարող է ինքնուրույնաբար հաղթահարել օրեցօր բարդացող հիմնախնդիրները: Միաժամանակ, անընդունելի է ցանկացած սոցիալական պորտաբուծություն, համերաշխության սկզբունքի չարաշահում, հասարակության ռեսուրսների գուր ծախս նրանց վրա, ովքեր միանգամայն ունակ են ապրելու առանց պետական աջակցության:

Արդիականացման ազգային ռազմավարության խնդիրն է ի հայտ բերել և պետական աջակցություն ցույց տալ նրանց, ովքեր պատրաստ են և ցանկանում են նվիրումով և հաստատակամորեն աշխատել, օգտագործել իրենց գիտելիքներն ու տաղանդը, սակայն դրա համար մեկնարկային օգնության կարիք ունեն: Ընդ որում, հարկ է ոչ թե պարզապես ապահովել և աջակցել հասարակության այդ ակտիվ հատվածին, այլև կառավարել ազգային ներուժի օգտագործման ողջ գործընթացը: **Ազգային ներուժի լիակատար օգտագործում**՝ ահա մոտակա տասնամյակում Հայաստանի արագացված առաջխաղացման գլխավոր բանաձևը: Իսկ դրա համար պետք է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ:

Սոցիալական արդարության կարևորագույն սկզբունքներից կամ աքսիոմներից մեկը «բարձր դասակարգի» կամ հարուստների պատասխանատվությունն է իրենց հասարակական վարքի, նախևառաջ՝ հասարակական բարոյականության նորմերի ոտնահարման համար: Մանավանդ որ մեզանում «բարձր դասակարգի» իրավագանցությունները և անբարո արարքները արտակարգ սուր արձագանք են գտնում բնակչության մեծամասնության մոտ:

Պետության կողմից հայ հասարակության առջև ունեցած իր պարտավորությունները քրոնիկ կերպով անարդյունավետ կատարելու պատճառով Հայաստանի քաղաքացիների շրջանում խոր տագնապ է առաջացրել իրավունքի և ազգային բարոյականության վերահսկողության ծայրաստիճան թուլացումը՝ իրավական նիհիլիզմը: Ավելին՝ Հայաստանում հասարակության մեծամասնությունը չունի անգամ տարրական իրավական գիտելիքներ: Պետության, նրա ինստիտուտների հետ կոնֆլիկտի դեպքում շատ շատերը ղեկավարվում են ինչ-որ անհասկանալի նկատառումներով, որոնք միանգամայն հեռու են տարրական իրավական տեղեկատվությունից: Ողբալի է, որ շատ հաճախ լիակատար իրավական անիրազեկվածություն են դրսևորում այն անձինք, ովքեր կոնֆլիկտ են ունեցել օրենքի հետ: Դրանց թվում է նախկին և ներկա բանտարկյալների մեծա-

ՉԳՆԻՏԻՆԵՐ
ՀԻՄՆԱԲԱՆՈՒՄ
9- (Թ) ԳՊԱՐԻ, ՔԻՎ 4 (36) ԽՈԿԵՆՏՐԵՆԵՐ-ՐԵԿԿՐԵՄԵՆԵՐ, 2011
ՎԵՄ համահայկական հանդես

մասնությունը:

Խիստ ցածր է իրավական կառույցների, դատական և դատախազական իշխանության նկատմամբ հասարակական վերահսկողության մակարդակը: Հետևաբար՝ Հայաստանում աննշան է դատարանի, դատախազության, դատապաշտպանության դերը իրավական գիտակցության ձևավորման գործում: Ընդ որում, տեսանելի ապագայում մեզանում հազիվ թե լուրջ փոփոխություններ տեղի ունենան իրավական ինստիտուտների և բնակչության փոխհարաբերություններում: Իսկ դա նշանակում է, որ հայ հասարակության քրեական վերասերումը դարձել է ռեալ սպառնալիք, որը շոշափում է ոչ միայն Հայոց պետականության ճակատագիրը, այլև ողջ հասարակության ամենօրյա կյանքը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը օրինականության ամրապնդումն է, որը Հայաստանում քաղաքացիական հասարակության, ինչպես նաև իրավական պետության կառուցման գրավականն է:

Անշուշտ, այս առումով հարկավոր են և՛ հարկադրական միջոցներ, և՛ անուղղակի լծակներ, որոնք կնպաստեն հայ հասարակության ներսում բարոյականության և արդարության տարրական կանոնների հաստատմանը: Սակայն, նախ՝ դրանք պետք է բացեիքաց հռչակվեն, պաշտոնական և ոչ պաշտոնական հավանության արժանանան, հակառակ դեպքում առաջ կգա համընդհանուր խառնաշփոթ, բարոյաիրավական կուրություն, ինչն ի վերջո կբերի հասարակության համար կասկածելի արժեքների հաղթանակին: Հենց այդ իրավիճակում է անհետանում բարոյաիրավական արժեքների կենարար ուժը, որն ամրակցում է ազգային օրգանիզմի գլխավոր բաղադրիչները՝ բարոյականությունն ու արդարությունը:

Հայաստանի քաղաքական ու տնտեսական ընտրանին պետք է գիտակցի, որ հասարակության բարոյական և իրավական նորմերը բոլորի համար են: Ծանոթ սփյուռքահայ լրագրողի խոսքերով՝ թեև հարուստը երթևեկում է «Ռոլս-ռոյս» մակնիշի ավտոմեքենայով, իսկ աղքատը՝ հին «Մոսկվիչով», սակայն չպետք է մոռանալ, որ երթևեկության կանոնները բոլորի համար միևնույնն են:

Բարոյաիրավական նորմերի հանրաճանաչ ըմբռնումն այն է, որ դրանք «ազդանշվում-հաղորդվում են» վերևից՝ կառավարող դասակարգի կողմից: Դեռևս Արիստոտելն է արձանագրել այս հանրահայտ օրինաչափությունը, ուստի ակներև է, որ այսօր՝ Հայաստանի կառավարող խավի վրա է դրված բարոյաիրավական արժեքների, նորմերի պահպանման և ամրապնդման ազգային և սոցիալական պատասխանատվությունը: Նման պատասխանատվությունը բխում է այդ փոքրաքանակ սոցիալական խմբի ձեռքում վիթխարի տնտեսական և քաղաքական ռեսուրսների կենտրոնացման փաստից, որը և նրան հնարավորություն է ընձեռում մեծապես ազդելու երկրի պետաքաղաքական և սոցիալտնտեսական կյանքի վրա:

Սակայն հատվածականության այն հզոր ոգին, որն այնքան բնորոշ է մեր «բարձր դասակարգի» առօրեական գիտակցությանը, անկախ և ազատ Հայաստանում շարունակում է ամրապնդվել ու տիրել: Այդ դասակարգը հակված է իրեն շրջապատող ազգային իրականության բարդ ու հակասական երևույթները գնահատել միայն իրեն հատուկ արժեսանդրակի, «կոորդինատների համակարգի» շրջանակներում: Նա ամեն ինչ գնահատում է միայն իր ազատության և վայելքապաշտության «կանոնագրքով»: Այդ իսկ պատճառով ցանկացած իրավական,

բարոյական նորմ ու կանոն, որը սահմանափակում է նման ձգտումը, նրա կողմից ընկալվում է բացասաբար: Այդ թվում՝ ազնվության, օրինավորության և արդարության հանրաճանաչ նորմերի հաստատմանն ուղղված սահմանափակումները: Դրա վկայությունն են այս դասակարգի շրջանակներում լայն տարածում ստացած բարոյական ռեյսատիվիզմի, իրավական նիհիլիզմի և պարզապես ցինիզմի տրամադրությունները: Իսկ ոմանց կողմից անբարո վարքը կամ իրավախախտումը զնահատվում է «նորմալ» և անգամ «բարոյական», եթե կատարվել է տնտեսական կամ քաղաքական դաշտում: Փույթ չէ, որ դրանք հակասում են այն նորմերին, որոնք ամրագրվել են իրավունքի կամ ազգային բարոյականության մեջ: Միանգամայն տիպական է դարձել այն իշխանավորը կամ գործարարը, որը մի կողմից՝ արտաքուստ պաշտպանում է օրինականությունը, իրավակարգը, իսկ մյուս կողմից՝ հնարավոր է համարում դրանք խախտել, եթե այդ ամենն օգտակար է անձամբ իրեն և չի ոտնահարում իր կամ իր խմբի շահերը: Այլ խոսքով՝ կենցաղային մակարդակում այս խավը իր ողջ կարողականությամբ գործառում է **իրավական սահմանազանցության («բեսպրեդելի»)** միջոցով:

Օրինակ՝ կառավարող վերնախավի առանձին ներկայացուցիչներ, որպես կանոն, առանց խղճի խայթ զգալու իրենց համար հնարավոր են համարում պաշտոնական պարտավորությունների չկատարումը: Միաժամանակ, նրանք պատրաստ են դա արդարացնել ամեն ինչով, միայն թե ո՛չ իրավական պարտավորություններով: Դրան նպաստում է նաև այն, որ արդարության ու բարոյականության արժեքները մեզանում ներհյուսված չեն պետաիրավական ինստիտուտների պրակտիկ գործունեության հետ:

Հայաստանի պետական-վարչական պրակտիկայում առաջացել է պարադոքսալ իրավիճակ. երկրի արդիականացումը պահանջում է բարձրորակ մասնագիտական կադրեր, սակայն հենց դրանք են «արտաքսված» պետական կյանքից: Նրանց տեղը զբաղեցրել են «հնարամիտները», ովքեր կարողանում են խաբել, շորթել բյուջետային միջոցները, իհարկե՝ «պետական հոգածության» ընդհանուր ցուցափեղկի ներքո:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ երկրի նորընձա պետական գործիչների շրջանում (առանձնապես՝ միջին «տրամաշափի») քիչ չեն նրանք, ում բարոյաիրավական և մասնագիտական կուլտուրան խոր և հիմնավորված կասկածներ է հարուցում հայ հասարակության տարբեր շրջանակներում: Բացի այդ, ազգային հարստության յուրօրինակ թալանի «նոր ձևերից» է բարձրորակ կադրերի զանգվածային օգտագործումը այնպիսի աշխատանքներում, որոնք չեն համապատասխանում նախկինում նրանց ստացած կրթությանը և մասնագիտական պատրաստվածությանը: Ակներև է, որ նրանցից շատերին այդպես էլ չի հաջողվել վերադառնալ նախկին մասնագիտությանը: Ուստի նման իրավիճակում գործնականում հնարավոր չէ կասեցնել մարզինալացման և ապամասնագիտացման գործընթացները: Ստեղծագործական ներուժի կողոպուտը, կադրերի դեգրադացիան անցել են խելամիտ ընտրության սահմանները, Հայաստանը հայտնվել է մտավոր ոլորտում ազգային գերակայությունների կորստի շեմին:

Ուստի պետության, բիզնեսի և հասարակության միջև սոցիալական պայմանագրի կամ դաշնագրի կնքման հարցը ավելի ու ավելի է տեղափոխվում ազգային օրակարգի կենտրոն: Դա բացատրվում է նրանով, որ երկրի ճգնաժամային վիճակի հաղթահարումը **նախ**՝ պահանջում է վճռականորեն բարձրացնել

իշխանության ճյուղերի, բիզնես-ընտրանու, կուսակցությունների, ակադեմիական և ճյուղային գիտության ու քաղաքացիական հասարակության համագործակցության և պատասխանատվության մակարդակը: Եթե կառավարող վերնախավը չգնա այդ քայլին, վերջականապես կարող է կորցնել իր հասարակական վստահությունն ու վարկը: **Երկրորդ՝** պահանջվում է, որ բիզնես-ընտրանին բարձրացնի իր սոցիալական պատասխանատվությունը: Դա նշանակում է, որ բիզնեսը, նախևառաջ, պետք է ապահովի մրցակցության պայմաններում աշխատողների առավելագույնս թույլատրելի աշխատավարձի մակարդակ, իրականացնի սոցիալական ծրագրեր, բարելավի աշխատանքի պայմանները, սկտիվորեն մասնակցի մարզերի և տարբեր բնակավայրերի առաջ ծառայած խնդիրների լուծմանը: Դա կնպաստի բիզնեսի սոցիալական ինտեգրմանը, պետության, բիզնեսի և հասարակության փոխգործակցության միասնական կանոնների մշակմանը: Այլ խոսքով՝ դրանց միջև յուրօրինակ սոցիալական պայմանագրի կամ դաշնագրի կայացմանը:

Մտահոգիչ է նաև այն իրողությունը, որ կառավարման համակարգում առաջացել է երիտասարդների ուղղաձիգ շարժունության «կապուղիների խցանման» իրավիճակ: Հայ երիտասարդների կարիերային աճի ճանապարհին գոյացել են յուրօրինակ «արենախիցքեր»՝ գույքային, կլանային և կորպորատիվ «ցենզի» տեսքով: Ամեն ինչի վրա «նստած» այդ «ցենզավորները», ցավոք, շատ նման են ժամանակին Կիրակոս Գանձակեցու նկարագրած մորեխի տարմին. «Հայոց յոթ հարյուր մեկ թվականին (1252 թ.) սարսափելի մորեխ եկան, այնքան, որ երբ վեր էին բարձրանում, ստվեր էր առաջանում, և արևի լույսը նվազ էր երևում: Եկավ ..., կերավ մեր հայոց աշխարհը՝ ոչ միայն կանաչ բույսերը, այլև երկրի հողը...»³: Ներկա պահին մեր երկրի գարնանային «կանաչ բույսերը» (երիտասարդությունը) պարզապես «ուտվում է» մորեխաբար և «արենախիցքի» պատճառով կանգ է առել ազգի ազատ զարգացման ընթացքը պայմանավորող «արյան շրջանառությունը»:

Հարկ չկա հատկապես ապացուցելու, որ առանց սոցիալական արդարության սկզբունքների հաստատման, ինչպես նաև առանց «սոցիալական վերելակների» համակարգի ստեղծման անհրաժեշտ նախադրյալների՝ հնարավոր չէ նման «արենախիցքերի» խցանահանումը: Այս տեսակետից ուսանելի է Արևելյան Եվրոպայի երկրների օրինակը, որտեղ փորձ է արվում քաղաքական, պետական կյանքում արձատավորել **մերիտոկրատիայի** սկզբունքը: Դրա նկատմամբ հետաքրքրությունը շատ բանով որոշվում է այնպիսի պրոբլեմների արդիականությամբ, ինչպիսիք են՝ մարդու վաստակը, նրա իրական ներդրումը և դրան համարժեք հասարակական գնահատականը, նյութական և բարոյական հատուցման աղբյուրների ազդեցությունը մարդկանց «մեկնարկային հնարավորությունների» վրա:

Դրանցից դեպի սոցիալական նոր, ավելի բարձր կարգավիճակներ տանող ուղին անցնում է սոցիալական շարժունության միջով: Խոսքը մի սոցիալական դիրքից մեկ ուրիշին անցման մասին է: Դեռևս Պ.Սորոկինն է տարբերակել սոցիալական շարժունության երկու տեսակ՝ **հորիզոնական և ուղղաձիգ**⁴: Ըստ այդմ տարբերակվում է **վերընթաց և վարընթաց** սոցիալական շարժունությունը: Մաս-

3 Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 258:

4 Տե՛ս Сорокин П. Человек. Цивилизация. Общество. М., 1992, с. 373.

նագիտական, տնտեսական և քաղաքական շարժունության վերընթաց հոսքը դրսևորվում է երկու ձևով.

ա) որպես անհատական վերելք կամ անհատի ներթափանցում՝ ըստ կարգավիճակի, ավելի բարձր սոցիալական խավ (ստրատ),

բ) որպես անհատների նոր խմբի ձևավորում՝ բարձր խավի մեջ ներառվելու հնարավորությամբ⁵:

Նույն ձևով վարընթաց շարժունությունը գոյություն ունի բարձր սոցիալական կարգավիճակից ավելի ցածրին՝ առանձին անհատների և խմբերի «վայրէջքի», արտամղման տեսքով: Որպես օրինակ կարող է ծառայել մեզանում արձանագրված ճարտարագետների մասնագիտական խմբի անկումը, որը խորհրդային ժամանակներում բարձր դիրքեր էր զբաղեցնում, կամ մեզանում որոշ քաղաքական կուսակցությունների կարգավիճակի վարընթաց փոփոխությունը՝ իրական իշխանության կորստից հետո: Պ.Սորոկինի պատկերավոր արտահայտությամբ՝ «Անկման առաջին դեպքը հիշեցնում է նավից ջուրը վայր ընկնելը, երկրորդը՝ նավը, որը խորտակվել է տախտակամածում գտնվող բոլոր մարդկանց հետ միասին»⁶:

Այս տեսակետից մեզանում՝ հետխորհրդային հայ հասարակության մեջ, գոյություն ունեն սոցիալ-ստատուսային խմբեր, որտեղ խիստ դժվար է վերընթաց շարժունության կապուղիներով թափանցել՝ դրանց ներփակության և արգելապատնեշների պատճառով: Ուստի հայ հասարակության տնտեսական և քաղաքական ընտրանին հիշեցնում է «կառավարչական ներփակ հիերարխիա»:

Հայ հասարակության արդիականացումն անհնար է առանց ստորին խավերից սերած բարձրակարգ պրոֆեսիոնալների, փորձագետների մշտական հոսքի՝ դեպի հանգուցային դիրքեր: Այստեղից էլ հետևում է, որ հարկավոր է մեզանում ձևավորել **բաց սահմաններով բաց հասարակություն**, որը յուրաքանչյուր շնորհաշատ հայի վերելքի շանսեր կընձեռի: Միաժամանակ, եթե հասարակությանը հնարավորություն տրվի ազատորեն հաղթահարելու սոցիալական խմբերի միջև առկա պատնեշները, ապա դա ամենևին չի նշանակում, որ յուրաքանչյուր անհատ, որն օժտված է տաղանդով և մոտիվացիայով, կարող է դյուրին շարժընթացով վեր բարձրանալ սոցիալական սանդղաղի աստիճաններով:

Անհրաժեշտ է նաև ապահովել տաղանդի, նախաձեռնության և աշխատասիրության պահանջարկվածությունը, ըստ վաստակի՝ արժանի հատուցումը, որոնք պետք է դառնան սոցիալական արդարության և միաժամանակ՝ հասարակական արդյունավետության հանրայնորեն ընդունելի չափանիշները: Դրա հետ մեկտեղ, մերիտոկրատիայի սկզբունքն անբաժան է խստագույն պատասխանատվությունից: Եթե ղեկավարն ակնհայտորեն ձախողում է աշխատանքները՝ մնալով անպատիժ, դա հիմնախախտում է ցանկացած սկզբունք, ցանկացած բարոյախրավական արժեք, ինչն իր հերթին ուժեղացնում է անհատի սոցիալական ընկալունակությունը, սրում սոցիալական արդարության զգացումը: Անցումը մերիտոկրատիային կապված է նաև անցյալի վաստակի հատուցման համակարգի ստեղծման հետ: Այդ վաստակի մոռացումը վատ օրինակ է նրանց համար, ովքեր մտնում են պետական ծառայության: Թերևս ճիշտ կլիներ վերականգնել հանրապետական նշանակության **անհատական թոշակները**: Դրանք պետք է

5 Տե՛ս նույն տեղում, էջ 374:

6 Նույն տեղում, էջ 376:

ունենան իսկապես անհատական բնույթ, իսկ սահմանման կարգը հարկ է կարգավորել պետական օրենքներով:

Արդարության սկզբունքների իրականացման գերակա խնդիրներից է **եկամուտների տարբերակվածության աստիճանի իջեցումը մինչև սոցիալականորեն ընդունելի մակարդակ**: Առավել հարուստ և առավել աղքատ խմբերի տարբերակման դեցիլային գործակիցը պետք է իջեցվի մինչև 8-10-ի մակարդակ՝ ներկայիս 18-20-ի փոխարեն: Երկրի բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, որը չափվում է ըստ գնողունակության պարիտետի, մոտակա տարիներին պետք է հասցվի մինչև 5 հազար դոլարի մակարդակին: Սկզբունքորեն այն թույլ կտա ապահովել բնակչության կյանքի բավական բարձր ստանդարտ:

Ինչպես երբեք, այսօր հրատապ է **եկամուտների պրոգրեսիվ հարկման սկզբունքի ամրագրումը**: Ընդամեն այն պետք է օրգանապես համատեղվի բարեգործության նոր մեխանիզմների ստեղծման հետ, որոնք թույլ կտան հարկման պրակտիկայում լայնորեն օգտագործել սոցիալապես նշանակալի հիմնադրամներում կատարվող մուծումները: Անհրաժեշտ է նաև հետևողականորեն պայքարել սոցիալական պորտաբուծության դեմ՝ մեծ ժառանգություններ ստանալու դեպքում սահմանելով համապատասխան հարկ: Այսպիսի պրակտիկա գոյություն ունի նույնիսկ ամենաազատական տնտեսություններում:

Եկամուտների սոցիալապես անընդունելի մակարդակի իջեցման անհրաժեշտ նախադրյալներից է **միջին խավի համալրումը**, նրա վերածումն առավել բազմաքանակ դասակարգի: Սա նշանակում է 4-ից մինչև 8 դեցիլային խմբերի համար ապահովել եկամուտների առաջանցիկ աճ, որը թույլ կտա նոր թափ հարդրելու ուղղաձիգ շարժունությանը և ձևավորելու հավակնությունների արդարացի համակարգ: Միջին խավի բարձրորակ կրթությունը և մասնագիտական պատրաստվածությունը բնակչության նշանակալի մասի համար կդառնան կարևորագույն գործոններ: Խոսքն այն խավի մասին է, որը զարգացող երկրում որոշում է տիրող սոցիալ-տնտեսական ու քաղաքական մթնոլորտը, ազգ-պետության սոցիալական ամուր հենարանն է և ապահովում է պետական ինստիտուտների գործունակությունն ու արդյունավետությունը: Հենց միջին խավի սոցիալական կարգավիճակի կայունությունն ու ժողովրդավարական արժեքների նկատմամբ կողմնորոշվածությունն է Հայաստանում արդար հասարակության կայացման վճռական պայմանը:

Անհետաձգելի քայլերից մեկը պետք է լինի **բյուջետային ոլորտի աշխատողների նյութական դրության էական բարելավումը**: Դա առաջընթաց կապահովի սոցիալական արդարության նորմերի հաստատման, ուղղաձիգ շարժունության արդյունավետ հարացույցերի ստեղծման, բարձրագույն կրթության որակի և կարգավիճակի բարձրացման ոլորտներում: Այստեղ խոսքը երկրի արդիականացման սոցիալական այնպիսի մեխանիզմի ստեղծման մասին է, որը հիմնվում է սոցիալական արդարության սկզբունքների նոր ըմբռնման վրա: Այս կերպ կարելի է ոչ միայն վերականգնել պետական իշխանության լեգիտիմությունը, այլև փոխել կենսահույզ խնդիրների, ամենից առաջ՝ աղքատության պրոբլեմի լուծման ողջ ռազմավարությունը:

Աղքատության պրոբլեմը մինչև այժմ լուծելու՝ պետության անկարողության պատճառներից մեկն այն է, որ սոցիալական քաղաքականության մեջ շեշտը դրվում է ավելի շատ անապահով խավերի սոցիալական պաշտպանության, տա-

րատեսակ բյուջետային վճարումների տրամադրման վրա: Համոզված ենք՝ հարկավոր է նաև այդ խավերին ապահովել պետական այնպիսի աջակցությամբ, որ նրանք հնարավորություն ունենան գործնականում ինքնուրույնաբար լուծելու սեփական պրոբլեմները: Այդ գործում կարևորվում են տարատեսակ **կրթական և մասնագիտական որակավորման ծրագրերը**: Բնականաբար, պետական աջակցության այդ մեխանիզմները հատկապես անհրաժեշտ են հենց խոցելի խավերի համար: Օրինակ՝ հայտնի է, որ մեզանում խիստ վատթար դրության մեջ են այն միայնակ մայրերը, որոնք խնամում են հիվանդ երեխաների: Այստեղ չի կարելի սահմանափակվել միայն նպաստներով: Ավելի շուտ օգտակար կլինեին մասնագիտական ուսուցման ծրագրերը, որոնք ունեն պահանջարկ և լավ վարձատրվում են:

Բացի այդ, թերևս նպատակահարմար է նման **անապահով խավերին վարձակալության կամ լիզինգային կարգով տրամադրել անհրաժեշտ սարքեր ու սարքավորումներ**: Ինքնուրույն աշխատանքի պայմանների ստեղծումը այդպիսի կանանց համեմատաբար բարեկեցիկ կյանքի, նշանակալի կարգավիճակի և վերջին հաշվով՝ աճող սերնդի լիարժեք դաստիարակության գործուն երաշխիքներից է: Այս հնարավորությունն, անկասկած, ավելի օգտակար է, քան նպաստը: Այլ կերպ ասած՝ առավել արդյունավետ և նպատակահարմար է աղքատության, վատթար կենսակերպի պատճառների վերացումը, քան դրանց հետևանքների կոսմետիկ «հարդարումը»: Այս վերջին դեպքում, Աստված մի արասցե, միշտ էլ կհայտնվեն ծանրամորուս «ազգասերներն» ու «լացացնող» դուրուկահարները՝ խելք սովորեցնելու կամ մխիթարելու համար:

Ստեղծված անբարենպաստ իրավիճակի պատճառների վերացումը և ուղղաձիգ շարժունության հետևողական իրականացումը թույլ կտան ապահովելու բնակչության թվաքանակի աստիճանական, ինքնաբավ աճը: Միաժամանակ, դրանք կնպաստեն «ազգային կարկանդակի» արդարացի բաշխմանը և սոցիալական պրոբլեմների լուծմանը հատկացվող միջոցների մեծացմանը: Արդյունքում՝ կհասնենք ոչ թե սոսկ աղքատության մասշտաբների կրճատմանը, այլ առհասարակ սոցիալական զարգացման որակի բարձրացմանը: Նաև՝ սոցիալական խնամառության տարբեր ձևերի վերացմանը, որն այսօր խիստ անհրաժեշտ է աշխատանքային բարոյականության սկզբունքների վերահաստատման համար:

Այս ամենն իրականություն դարձնելու նպատակով անհրաժեշտ է մշակել սոցիալական անհավասարության դեմ պայքարի համալիր ազգային ծրագիր: Դրա համար կպահանջվի պետության և հասարակության լայն համագործակցությունը՝ հայ հասարակության մեջ տարատեսակ անհավասարությունների հայտնաբերման, խճճված փոխհարաբերությունների պարզեցման նպատակով: Արդյունքում կմշակվի անհավասարությունների մեղմացման (մասամբ էլ՝ վերացման), բնակչության ուղղաձիգ շարժունության ուղիների հստակեցման ազգային գերակայությունների ընդունելի, հանրաճանաչ համակարգ: Դրա կարևոր մասը պետք է կազմի Հայաստանի բնակչության սոցիալ-տնտեսական դրության, ներառյալ՝ **սոցիալական անհավասարությունների ազգային մոնիտորինգի կազմակերպումը**:

Վերջապես՝ կարևոր ու հրատապ է նաև առկա հիմնախնդրի գնահատման **հայեցակարգային սկզբունքների** հստակեցումը: Հայ ազգին, նրա պետականու-

թյանն անհրաժեշտ է սոցիալական և ազգային արդարության հուսադրող հեռանկար: Սոցիալական արդարությունն իր նորովի ըմբռնմամբ պետք է դառնա արդի Հայաստանի հիմնարար արժեքներից մեկը:

Ներկա նախընտրական հանգրվանում, երբ ազգային և սոցիալական արդարության պրոբլեմներն առաջավոր գիծ են դուրս գալիս, համոզված ենք՝ բազմաթիվ քաղաքական ուժեր կգինվեն նման կարգախոսներով: Խնդիրների խնդիրն այս հիմնարժեքի հետևողական իրականացումն է՝ արդիականացման նախագծերի համալիրի միջոցով, որպեսզի այն դրվի պետական ինստիտուտների պրակտիկ գործունեության հիմքում: Իսկ դա պահանջում է Հայոց պետականության պատմական պատասխանատվությունը՝ երկրի ազգային գերակայությունների համակարգի մեջ մասնավոր շահերի ներդաշնակ համախմբման գործում: Հայաստանի արդիականացման նոր նախագծի կարգախոսները պետք է դառնան **հայրենասիրությունը, ժողովրդավարությունը և արդարությունը:**

Summary

THE AFFIRMATION OF JUSTICE IS THE BEST POLICY

Manuk A. Harutyunyan

After the tectonic changes that have taken place over the past 20 years in Armenia, it is necessary to clarify as to how the notions of social justice have been altered and what are the comprehensible criteria for justice today.

The urgency of the issue of social justice does not mean that is possible to return to the Soviet understanding of equality. As a matter of principle the liberal approach, which is connected to the formal equality of rights, is also unacceptable, because it does embrace the conditions for its realization. We are convinced that Armenian society is ready for a new understanding of justice, for the comprehension of “just development;” for the poor, protection, for active and enterprising people, support by the state and for the wealthy, laws. The new understanding of social justice can and should be grounded upon the linkages of social-national solidarity, guarantees and responsibility.

Thereby, the main slogans for Armenia’s systematic modernization are patriotism, democracy, justice.